

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 9-ին՝ կիրակի օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարում ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն շնորհեց Երուսաղեմի հայոց սրբոց Հակոբյանց վանքի փոխարան, հոգեշնորհ տ. Կյուրեղ վրդ. Գաբրիկյանին, որն ուխտավորաբար, ս. Ջատկի տոնիով, գտնվում էր Մայր Աթոռում։

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր Ուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։

Տ. Կյուրեղ վրդ. Գաբրիկյանը ծնվել է Երուսաղեմում՝ 1921-ին, ս. Հակոբյանց վանքի ամարների տակ։ Որդին է Հայտնի բանաստեղծ և պատմաբան, սեբաստացի Կարապետ Գաբրիկյանի։

Ավազանի անունով՝ Գեղամ։ Նախնական կրթությունը ստացել է Երուսաղեմի հայոց Թարգմանչաց վարժարանում և ապա եկեղեցական իր մասնագիտությունը՝ վանքի առանգավորաց ընծայարանում։

1950 թվականին սարկավագ է ձեռնադրվում և դառնում անդամ ս. Հակոբյանց միաբանական ուխտին։

Այնուհետև վանքում վարում է ուսուցչական, վանական, վարչական պատասխանատու պաշտոններ։

1952 թվականից ի վեր ձեռնհասորեն վարում է ս. Թարգմանչաց վարժարանի տեսությունը։ Նրա ջանքերով այդ նախակրթարանը վերածվում է երկրորդական հայկական միջնակարգ դպրոցի։

1954—56 թվականներին, որպես նվիրակ, վանական իշխանության կողմից ԱՄՆ է ուղարկվում հանգանակություն կատարելու համար՝ ի նպաստ Երուսաղեմի հայոց վանքի։

1956—1961 թվականներին անդամակցում է վանքի տնօրեն ժողովին։

1962 թվականին Երուսաղեմի ս. Հարության տաճարի նորոգության համար, որպես նվիրակ, նորից հանգանակություն է կատարում Հարավային և Հյուսիսային Ամերիկաներում ու հայ Երուսաղեմի մասին իր խանդավառ դասախոսություններով ջերմացնում սրտերը։

1964 թվականի սեպտեմբերին, առաջին անգամ որպես ուխտավոր, այցելում է Մայր Աթոռ և հայրենիք։

1966 թվականի հոկտեմբերին, նորից հանգանակության համար, մեկնում է Հարավային Ամերիկա։

1967 թվականի մարտի 23-ին, երկրորդ անգամ, ուխտի է գալիս Մայր Աթոռ։

Հոգեշնորհ տ. Կյուրեղ վրդ. Գաբրիկյանը հավատավոր, իր կոչման նվիրված, պարտաճանաչ հայրենասեր հոգևորական է։ Նա գտնվում է իր ուժերի հասունության շրջանում։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է ջերմորեն հոգեշնորհ տ. Կյուրեղ ծայրագույն վարդապետին՝ մաղթելով նրան նորանոր հաջողություններ այն խորը հավատքով, որ նա իր հետագա ծառայություններով և նվիրումով կարդարացնի Մայր Աթոռի և Երուսաղեմի հայոց պատրիարքության կողմից իր անձի հանդեպ տածված վստահությունը։